ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆ

Այս խոշոր մարդուն շատ քիչ եմ տեսել։ Եվ մի անգամ միայն հետը խոսել եմ և տպավորությունս այն է եղել, որ նա իր ժամանակի դերազանց մարդկային հարաբերությունների տիպարն էր... Եվ խոր համոզմունք եմ ունեցել, որ ճանաչել եմ բանաստեղծ Թումանյանին, երբ մի տող իսկ չէի կարդացել նրա գործերից։

Այս խոտորնակ երևույթը՝ մարդկանց ճանաչել կամ կարծել թե ճանաչում ես, առանց նրանց «Գործի» հետ ծանոթ լինելու, գոնե այդ ժամանակները, երբ տպավորությունը մարդկանցից և աշխարհից նոր էր ինձանում, թերևս իմ պակասն էր կամ առավելությունը։ Ասեմ այսքանը, սակայն, որ նման միջոցառումով մարդու ճանաչման ճանապարհներին, իմ կանաչ օրերին, ես չեմ սխալվել։ Ոչ ոք այդքան ոչ ոքի բարեկամը չէր այդ փոքր, բայց և մեծ, կենդանի քաղաքում՝ Թիֆլիսում, ինչպես Թումանյանը, և ինչպես մարդիկ իրեն զբաղումով բժիշկ էին, առևտրական, խանութպան, Թումանյանն իր առօրյա զբաղումով «բարեկամ» էր։ Ներողություն, մի սարբերություն, սակայն. եթե ի պաշտոնե առևտրականը, վարժապետը, վաճառականը և այլն ետ աշխատանքի իր խանութի փեղկերը փակում էր, երբ օրը ընկնում էր, Թումանյանը ոչ խանութ ուներ, ոչ դուռ, ոչ կողպեք, որ որևէ բան փակեր, որովհետև նույն բարեկամությունը նրանում շարունակվում էր, բաց էր խանութը, թե փակ, միևնույն է։ Եվ եթե օրը տասներկու ժամ էր բոլոր խելացի մահկանացուների համար, ապա Թումանյանի համար օրը իր աստղաբաշխական սեռությամբ արժեք ուներ, այսինքն, քսանչորս ժամից մի երկվայրկյանով ոչ պակաս զվարճախոսության, բարեկենցաղության, խելացի կատակախոսության կամ հեռատես դուշակությունների միշտ լավատես մի աղմուկով, մի հոսանքով ավելի շուտ. որն իր ծիրի մեջ քաշում, հավաքում էր ոչ միայն բոլոր զվարթներին այդ զվարթ քաղաքում, այլև թխպոտ հոգիներին էր արևոտում իր լայն ժպիտով, օսլայված ու միշտ մաքուր ու սովորականից բարձր օձիքի մեջ ուղիղ պահելով ոչ միայն այդ ժպիտը, որի նմանը չտեսա այլևս, այլ հարձակողական քիթը, պարսպապատի նման անկործան ճակատը, հիանալի ատամնաշարը՝ մեծ ու փայլուն ակռաներից կազմված... Իսկ այս բոլորի մեջ ո՞ւր են նրա աչքերը, կհարցնեք ինձ։ Ես զիտմամբ դիմակից հետո թողեցի աչքերը, որովհետև այդ զույգ բազմավառ ջահերը բացատրությունն էին իմ մինչև հիմա ասածին այնքան, որ Թումանյանը կար իր աչքերով միայն և համոզված եմ, որ չէինք ունենա մենք այսօր մեր այնքա՞ն սիրված ժողովրդական բանաստեղծը, եթե այդ աչքերը չլինեին։

Ամեն ինչ տեսնող, տեսնելուց հետո էլ տեսածը մերկացնող, իսկ հանդիպածը մերկության տանելի մի բացատրություն տալով, ընդունելի դարձնող հոգեբան և մարդագետ այդ բանաստեղծը իր ամբողջ էությամբ այդ զույգ աչքերն էր միայն, և եթե հանեիր նրա վրայից ճկուն ու բարձր հասակը, խելացի

ու հրապուրիչ կերպարանքը, միշտ մաքուր և նոր հագնվելու սովորությունը, մի խոսքով, ամենօրյա Թումանյանը, դարձյալ կմնար Թումանյանը՝ շնորհիվ այդ աչքերի, որոնք Թումանյանին էին ոչ թե շնորհիվ իր ծնողների, իր այնքան սիրած լեռնաշխարհի, այլ իրենն էին ստեղծագործական ամենազաղտնի օրենքով։ Եվ եթե ինքը Թումանյան էր նախ և առաջ աչքերով, ապա նրա աչքերը թումանյանական էին, նախքան թե աչք էին։

Այս բոլոր վերոհիշյալ առավելությունները շաղված էին ստեղծագործական երևակայության այնպիսի մի շաղախով, որի նմանը ես գուշակել էի մինչ այդ Արևմտյան Եվրոպայի մի քանի գրողների մոտ և արևելքի պատմողներից մնացած հին հիշատակարանների փոշոտած էջերում։ Այո՛, իր ծննդավայրն ու հայրենի տունն այցելելուց հետո միայն եկա ես այն եզրակացության, որ Թումանյանն իր նմանը չունեցող այն հագվագյուտ թանկարժեք ծաղիկն է, որ բուսնում է հանկարծ երկու ապառաժի արանքում, անջրդի և հողմավար մի վայրում և այն էլ վատ ժամանակ։ Բայց այնքան էր նա ժողովրդական իր գույնով, իր բուրմունքով, իր ինքնուրույն ծաղկի պատկերով և այդ բնականությամբ այնքան է նա ժայռինը, հողինը ու քամուն, որ ստեղծեցին նրան, որ ժողովրդինն է՝ սեփականության ամենալայն առումով։ Եվ սխալ է ենթադրել, թե աշխարհացրիվ հայ ժողովրդի մի փոքր գավառի ծնունդն է նա։ Նա ծնվեց բոլոր հայ մայրերից՝ բախտի բերմամբ բոլորի համայնական զվարթ մի բոպեին և բոլոր հայ հայրերից, որոնց ժամանակն ի մի էր հավաքել և բոլորի ձեռքին մի-մի բաժակ դրել։

Նա մեր տխուր, անժպիտ կյանքի անմար ջահը ու կանթեղն է, ամեն ուրախության սեղանի զարդը և արտասանված բոլոր բարեմաղթությունների լավագույնը։

Տխուր ժամանակ գնաց մեզանից... Մե՜ղք նրան։ Բեղմնավոր հունձքի ժամանակ գնաց մեզանից... Փա՜ռք նրան։